ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/2803/02/24 ք. Երևան
17 Ապրիլի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Սամվել Բաբայանի (այսուհետ նաև՝ Դատարան), ծանոթանալով «Կրաֆտհեմտեխնոլոջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ) հայցադիմումին ընդդեմ «Նոյեմբերյան համայնքի համայնքային տնտեսությունը սպասարկող» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ նաև՝ «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի)՝ «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու, Արսեն Ղուլիջանյան ԱՁ-ին հաղթող ճանաչելու մասով «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ թիվ ՏՄՆՀՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-24/07 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի 27.03.2024 թվականի թիվ 3 արձանագրությունը մասնակի անվավեր ճանաչելու, «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի թիվ ՏՄՆՀՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-24/07 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

«Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դավիթ Ասատրյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի՝ «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու, Արսեն Ղուլիջանյան

ԱՁ-ին հաղթող ճանաչելու մասով «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ թիվ ՏՄՆՀՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-24/07 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի 27.03.2024 թվականի թիվ 3 արձանագրությունը մասնակի անվավեր ճանաչելու, «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի թիվ ՏՄՆՀՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-24/07 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով Դատարանում ստացվել է 12.04.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն.

3) հայցվորը հրաժարվել է պահանջից:

Տվյալ դեպքում, ներկայացված հայցադիմումով հայցվորը վիճարկում է գնահատող հանձնաժողովի գործողությունները, ուստի հայցը ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ և գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200 –րդ, 361-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդդեմ «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի՝ «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու, Արսեն Ղուլիջանյան ԱՁ-ին հաղթող ճանաչելու մասով «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի

կարիքների համար՝ թիվ ՏՄՆՀՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-24/07 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի 27.03.2024 թվականի թիվ 3 արձանագրությունը մասնակի անվավեր ճանաչելու, «Նոյեմբերյան համայնքի ՀՏՍ» ՀՈԱԿ-ի թիվ ՏՄՆՀՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-24/07 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով և եզրափակիչ դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակել **2024 թվականի հունիսի 3-ին:**

3. Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Սամվել Բաբայան

Digitally signed by
SAMVEL BABAYAN 2510940023
Date: 2024.04.17 16:39:48 mID

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am